№ 10 Յունվարի 27 (Փետրվարի 8) 1879 Յունվարի 27 (Փետրվարի 8) № 10

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական վերջին անցքերը։—Ներքին տեսութիւն։ Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։—Արտաքին տեսութիւն։ Ժիւլ Գրէվի։ Ֆրանսիա։ Թիւրքիա։—«Մշակի» հեռագիրներ։ — Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։—Բանասիրական։ Նոր-Նախիջևանի քլուբը։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՆՑՔԵՐԸ

Ամենանշանաւոր քաղաքական փոփոխութիւն վերջին ժամանակներում պատահեց Ֆրանսիայի պետական կեանքի մէջ։

Յունվարի 5-ի սենատի անդամների ընտրութիւնը ահագին մեծամասնութիւն տուեց հանրապետական կուսակցութեան։ Այդ ընտրութիւններով Ֆրանսիայում վերջնականապէս հաստատվեց հանրապետութիւնը։

Մինչև այդ ժամանակ հանրապետականները մեծամասնութիւնը էին կազմում միայն ազգային ժողովի մէջ։ Սենատի մէջ զանազան գոյների միապետականները դերակշռում էին հանրապետականներին և այդ երկու ժողովների մէջ անդադար անբաւականութիւններ էին պատահում։ Ժողովուրդը բոլոր ժամանակ չափազանց լարված դրութեան մէջն էր։ Քաղաքական դրութիւնը ամեն դասակարգին պատկանող մարդկերանց յուզում էր, ամենքը այդ դրութեամբ հետաքրքրված էին, ամենքը անհամբեր սպասում էին, որ երկրի մէջ հաստատվի վերջնական պետական մի ձև, ամենքը ցանկանում էին դուրս գալ անցողական դրութենից։

Վերջապէս Ֆրանսիացիք տեսան այդ օրը։ Յունվարի 5-ին ընտրութիւնները, կրկնում ենք, վերջնականապէս հաստատեցին Ֆրանսիական հանրապետութիւնը։

Սենատի և ազգային ժողովի առաջին նիստերը բաւական աղմկալից էին։ Երկու ժողովներ էլ պահանջեցին, որ 1877 թ. մայիսի 16-ի մինիստրութիւնը դատաստանի ենթարկվի։

Էնց այս հարցը վճռվեցաւ, Ֆրանսիական ազգային ժողովը պէտք է գործ ունենար մինիստրական կրիզիսի հետ և այդ նշանաւոր գործը կարգադրեր։ Վերջացաւ մինիստրութեան կրիզիսը և երկու ժողովների և հանրապետութեան նախագահի մէջ անհամաձայնութիւն ծագեց, որի պատճառով նախագահ մարշալ Մակ-Մահօն սպառնում էր հրաժարական տալ։

Իւրաքանչիւր հասարակութեան, իւրաքանչիւր պետութեան քաղաքական կամ տնտեսական կեանքի մէջ երբ մի այսպիսի նշանաւոր փոփոխութիւն է պատահում, նա կամայ ակամայ ամեն մի քայլափոխում դժուարութիւնների, մինչև անգամ ըստ երևոյթի անյաղթելի արգելքների է պատահում։ Նոյնը պատահեց և Ֆրանսիայի հետ վերջին շաբաթներում։

Մեր յօդուածի դիրքը չէ նեռում մանրամասնաբար պատմել այն բոլորը, ինչ որ պատահեց վերջին ժամանակներում Ֆրանսիայում։ Այդ անցքերի հետ ընթերցողները կարող են ծանօթանալ «Մշակի» արտաքին տեսութեան բաժնից. մենք կը բաւականանանք յիշելով միայն նշանաւոր անցքերը։

Ֆրանսիական երկու ժողովների և հանրապետութեան նախագահ մարշալ Մակ-Մահօնի մէջ ծագած անհամաձայնութեան պատճառը զինուորական բարձր հրամանատարութեան հարցն էր։ Ժողովները պահանջում էին, որ փոխվեն չորս միապետական բարձր հրամանատարները և նրանց տեղ հանրապետականներ նշանակվեն։ Մարշալ Մակ-Մահօն հրաժարվեց ստորագրել այդ կարգադրութիւնը և սպառնաց հրաժարական տալ։ Սենատի և ազգային ժողովի մեծամասնութիւնը պատասխանեց, որ նա թէպէտ չէ ցանկանում հրաժարեցնել պաշտօնից նախագահին, բայց կընդունի նրա հրաժարականը, եթէ մարշալը չը համաձայնի կատարել ժողովների կարգադրութիւնը։

Հեռագիրը մեզ հաղորդեց, որ Մակ-Մահօն հրաժարական տուեց և նրա տեղը ընտրվեց հանրապետական Ժիւլ Գրէվի։

Ժիւլ Գրէվի հանգուցեալ Թիերի համամիտներից մէկն է։ Ֆրանս-պրուսական պատերազմից յետոյ հրաւիրված ազգային ժողովին նախագահ ընտրվելով, այդ խառն միջոցում, երբ կուսակցութիւնները միմեանց դէմ չափազանց գրգռված էին, Ժիւլ-Գրէվի շատ գեղեցիկ կառավարում էր ազգային ժողովի նիստերը և ա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՔԼՈՒԲԸ

Օրէս ուղիղ տասնուվեց տարի առաջ բացուեցաւ մեր քաղաքի քլուբը։ Համարձակ և անսխալ կարելի է ասել, որ ոչ մի հասարակական «հիմնարկութիւն» (учрежденіе) այնպիսի հզօր զարկ չի տուեց նախիջևանցոց բարոյական զարգացմանը, որքան մեր տեղի քլուբը, որ իսկապէս եղաւ մեզ համար «կենտրոն մտաց, բարոյական շահուց և միաբանութեան»։ Նախիջևանի քլուբը ծնաւ և զարգացաւ շատ անզգալի կերպով. ոչ նրա սկզբնաւորութիւնը մեծ խոստմունքներով և փառաբանութիւններով կատարվեցաւ և ոչ յընթացս իր 16 ամեայ կեանքին ջանաց արուեստական հնարներով ժողովրդի մտադրութիւնը և քսակը իւր վրա և իւր մէջ քաղելու. միով բանիւ՝ մեր քլուբը այնպէս համեստ ծնաւ և ոտքի կանգնեցաւ, որ երբ հասաւ իւրՀ ծաղկած պատանեկական հասակին, մի պատուական օր, ամենքս զարմանալով նայեցանք նրա վրա և ասացինք «Էվալլա, ինչ տեսօք բան իս էղել է»։

Իւր օգտաւէտութեամբ Նախիջևանի քլուբը չուտով գերազանցեց այնպիսի հասարակական հիմնարկութիւններ, որպիսի են՝ դպրոց, մատենադարան, թատրոն և այլ այսպիսի դաստիարակիչ և կրթիչ ձեռնարկներ։

Հարիւր տարի է, որ Նախիջևանը ունի դըպրոցներ։ Բայց ցաւելով պէտք է խոստովանել, որ նոցա տուած պտուղը մեքենական «գրել-կարդալէն» վեր չի գնաց. հայ ժողովուրդը ոչ իւր վարժատուներէն և ոչ վարժապետներէն մի ժանգոտած կոպէկի չահ չունեցաւ. ուստի մեր տեղացոց հայի օրական ապրուստը չապահովեց։ Այստեղ տէր Գաբրիել Պատկանեանը մի մխիթարական բացառութիւն էր կազմում։ Ցանցանք կը լինէր, եթէ ասէինք թէ՝ Նախիջևանցին ուսումնատեաց է. բայց, տարաբաղդաբար, ուսման օգուտը չի տեսնելով, միանգամայն չէ հաւատում նրա փրկաւէտ ներգործութեան։ Նախիջևանցոց հացատու դպրոցն էր, է և դեռ ևս երկար ժամանակ պիտի լինի «խանութի դիմաց խըզմէթքեարութիւն» անելը։ Ցիմար կը լինէր Նախիջևանցին, եթէ իւր զաւակների մտաց զարգացումը և հոգւոյ բարգաւաճութիւնը՝ սպասէր Կայիսիաներէն, Պամպուլիսներէն, Դեղնամորուսեաններէն, խելացնոր թօռմազ-աղաներէն և այլ այսպիսի մարդախաբներէն։

Եկեղեցոյ մասին ասելն անգամ աւելորդ է. վասն զի չարաբաստիկ տէր Գաբրիել Պատկանեանէն յետ, Նախիջևանի եկեղեցեաց ամբիոնէն չի լսուեցաւ «դաստիարակիչ եկեղեցոյ» ձայնը. իսկ եթէ միշ հինկ մանէթնոց քարոզները կամ արհամարհանք, կամ ծիծաղ շարժում էին միամիտ Նախիջևանցու մէջ։

Նախիջևանը լրագիր ունեցած չէ. և այն դըրութեան մէջ, ուր որ է նա այժմ, երկբայելի է որ մօտ ապագայումս ունենայ....

Հաղիւ թէ Նախիջևանը սկսել էր թատրոնի համը առնելու, որ պ. Ֆասուլէճեանը և տ. Պայծառը թողին մեզ և գնացին. թէև նոցա բարի յիշատակը տակաւին անհետացած չէ մեր սրտերէն և մեր ափսոսանքը սաստիկ է, բայց ճշմարիտը ասելով, թատրոնը չի կարողացաւ, իւր սակաւատև կեանքի պատճառաւ, դաստիարակիչ նշանակութիւն ունենալու։

Մեր մատենադարանն ևս (պ. Հալլաճեանին) շատ սակաւատև կեանք ունեցաւ. ժողովրդի օրական պիտոյքը չի դարձած թառամեցաւ, չորացաւ և արևելեան քամին առաւ ու տարաւ դէպի արևմուտք։

Մնաց մէկ հատիկ մեր քլուբը, որ ահա տասն ու վեց տարի է, որ օրէ օր, թէև շատ համբ, բայց անդուլ ծլում, ծաղկում և աճում է։ Մեր քլուբի անդամների թիւը կը տատանի 150-ի և 200-ի մէջ. երբէք պակասած չէ այս թիւերէն և երբէք աւելանալու չէ, և այդ շատ հասկանալի է. վասն զի Նախիջևանի առաջաւոր, առաջնակարգ բնակչաց թիւը մօտ ի մօտոյ այդքան է։ Շատ ծիծաղելի բան կը լինէր, եթէ մենք երբ և իցէ յոյս ունենայինք, որ շուկայի մէջ խնձոր ծախողները և փողոցի արապաճիները կուգան և մեզ անդամակից կը լինեն։ Այս 150—200 մարդոց մէջ է, որ Նախիջևանի բարոյական կեանքը կը պտտի։

Ով որ կուզէ Նախիջևանցոց բնաւորութիւնը, մտաւոր և նիւթական ուղղութիւնը, զարգացման աստիճանը, սիմպաթիան, անթիպաթիան, դատմունքի ձևը, մինչև անգամ թերութիւնները սերտելու անպատճառ ելումուտ պիտի ունենայ տեղւոյս քլուբի մէջ, ուր Նախիջևանցին կերևի նրան միանգամայն այնպէս, ինչպէս որ է, առանց դիմակի, առանց սեթեթի զարդարանքի և պատրիչ արտաքինի։ Նախիջևանի քլուբը, համարձակ կարող եմ ասել, ժողովրդական է. թէև նա օրինակած է օտարէ, բայց ստացել է բուն հայկական կերպարանք։ Չեմ սխալիլ, եթէ ասեմ թէ հայաբնակ քաղաքների մէջ գտնուած քլուբներէն միայն մերն է «իսկապէս հայ քլուբը»։

Երևակայեցէք ձեզ մի հասարակաց ժողովարան, ուր ամեն մարդ կարող է այնպէս շարժվել, խօսել, գատել, ներգործել, ինչպէս որ «սիրտը կուզէ»։ ոչոք նորա ազատութիւնը խլող չի կայ։ Խաղասէրը ժամերով նստած է կանանչ սեղանի առջև, «խօճատէնէկ» ծխելով, ծիծաղելով և չայ անուշ-անելով տարում է կամ տարվում է։ Ընթերցասէրը և փիլիթիքանը իւր նմանների հետ առանձնանում է մի ուրիշ սենեակ, աջ ու ձախ դատում ու դատապարտում է Բիքօնսֆիլդին, Անդրաշիին, Բիսմառքին, Շեր-Ալիին, և որքան որ ձայնի զօրութիւնը հասնում է «չամթա» է վերցնում, և ոչոք նորան չի ասում թէ «աչքիդ վրան ունք կայ»։ Բիլիառդիստը քիսը ձեռքէն ցած չի դնում, «չառթ, չառթ զարնելէն» գլորում է կարմիր ու դեղին գնդակները և ոչոք նորան «քէտէր» չէ լինում այդ ազդասիրական և ազգապարծանք գործունէութեանը։ Ես էլ խո *), բաժակով թէյն առջևս, մտերիմներուս չորս կողմս առած, բզիկ բզիկ անում ենք թիւրքի սուլթանին, քիւրդերուն և մեր թօռմազ-աղաներուն, ևս և conronnes civiles բաժանում ենք այս և այն հրատարակիչներուն, հեղինակներուն և Հայաստանի սրտացաւներուն.—և ոչոք մեզ չի արգելում։

*) Փոքրիկ նկատմունք։ Իմ կարծիքով խոշաղկապը, որ համապատասխան է ռուսաց вѣдь-ին, ֆրանսիացոց donc-ին և գերմանացոց doch-ին, բուն հայոց բառ է, և ծագում է խորհել բայէն։

մեն մի կուսակցութիւն նրան ա-նաչառ էր համարում: Յիւլ Գրէվի եօթ տարի ժամանակով ընտրվեցաւ Ֆրանսիական հանրապետութեան նախագահ:

Անգլիան վերջացնելու վրա է իր գործերը Աֆղանիստանի հետ: Վերջին ստացած լուրերից երևում է, որ Աֆղանիստանի էմիրի որդի Եակուբ-խանը, որին, յանձնված է երկիրը էմիրի փախուստից յետոյ, մտադիր է խաղաղութիւն հաստատել Անգլիայի հետ, ստորագրել նրա առաջարկած պայմանները և իրան յայտնել Աֆղանիստանի էմիր:

Թէ պատերազմը անփախչելի է լինելու Ռուսաստանի հետ, դրա մասին անգլիացիք այժմ շուտ շուտ են խօսում և անգլիական հասարակական կարծիքը ընտելանում է այդ մտքի հետ: Երբ կը լինի արդէօք այդ պատերազմը, անկարելի է գուշակել, բայց մի և նոյն ժամանակ բոլորովին ճշմարիտ է մի քանի ռուս լրագիրներից յայտնած այն միտքը, թէ այդ պատերազմը արդէն սկսված է, թէ նրա հիմքը դրվեցաւ այն ժամանակ, երբ Անգլիան պաշտպանեց Թիւրքիային և ընդդիմացաւ ռուսաց քաղաքականութեան արևելքում: Այդ միտքը կրկնում ենք բաւական իրաւացի է:

Ռուսաց և Թիւրքաց պետութիւնների մէջ եղած յարաբերութիւնները և այդ երկու պետութիւնների ընդհանուր գործերի դրութիւնը վերջին ժամանակներում գրեթէ չեն փոփոխվել:

Մի ժամանակ հեռագիրը լուր բերեց, որ այդ երկու պետութիւնների վերջնական խաղաղական դաշնագիրը շուտով ստորագրվելու է, բայց այդ լուրը չը հաստատվեց և երկու կառավարութիւններն էլ այժմ փոխադարձաբար առաջվայ անորոշ դրութեան մէջ են գտնվում:

Ռուսաստանի հարաւ-արևելեան նահանգներում յայտնված ժանտախտը մեծ ազդում գցեց եւրոպական պետութիւնների մէջ: Գերմանիան չափազանց խիստ սահմանային կարանտին է հաստատել: Անկասկած այսպիսի դրութիւնը մեծ հարուած կը հասցնէ Ռուսաստանի արտասահմանեան առևտրին: Ժանտախտին Եւրոպայում, ռուս լրագիրների կարծիքով, չափազանց մեծ նշանակութիւն են տալիս: Ռուս լրագիրները գանգատվում են, որ արտասահմանում չեն հաւատում պաշտօնական հաղորդութիւններին ժանտախտի մասին: «Բրտասահմանում, ասում է «Голосъ» լրագիրը, աւելի հաւատ են ընծայում մասնաւոր լուրերին ժանտախտի մասին, աւելի իրաւացի են համարում գերմանական, աւստրիական, մինչև անգամ բուսիական բժիշկների կարծիքները, քան թէ մեր պաշտօնական բիւլետենները:»

Վ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս 25 յունվարի

Բերլինի դաշնադրութեան օրից սկսած հայոց ազգը ստացել է այնպիսի ինտերես, որ ամեն կողմից սկսել են խօսել, գրել, հետաքրքրվել, ուսումնասիրել և պարապել մեզանով օտար ազգի պուբլիցիստները: Ես հաւատացած եմ որ ձեր ամենօրեայ թերթը որչափ ցանկութիւն էլ ունենայ թարգմանել հայ հասարակութեան համար ամենը, ինչ երևում է մեզ վրա եւրոպական զանազան լրագիրների և բրոշիւրների մէջ, նա միանգամայն անկարող կը լինի լրացնել այդ ցանկութիւնը, վասն զի անդադար մեզ նուիրում են յօդուածներ և ռուսական, և գերմանական և իտալական և անգլիական լրագիրները ու առանձին անհատներ: Այդ ամենը, անտարակոյս, իւրաքանչիւր հայի սրտին մեծ հրճուանք է և մխիթարութիւն և նա ձեռքից ձեռք յափշտակելով միշտ զմայլմամբ է կարդում օտարների խօսքը իր վրա: Մեր մամուլն էլ ի հարկէ պարտաւոր էր ստանալ մի նոր քաղաքական կերպարանք և դրութիւն, ունենալով իր նիւթը այն նորոգումները և իրաւունքները, որ խոստացել է Եւրոպան տաճկա—հայերին: Բնականապէս կարդացող հայը իր սիրտը միշտ հանգիստ կը զգայ, տեսնելով որ իր հայրենիքը դրել է ոտը այն ճանապարհին, որը պիտի հասցնէ վաղ թէ անագան իր բազմատենչ վերջնական նպատակին, մանաւանդ երբ նրա համար հոգում են և նրան առաջնորդում զարգացած գործիչները—ինտելիգենցիան:

Ուշքի առնելով այս ամենը, ճշմարիտ ես չեմ կարող իբրև համեմատութիւն չը մտաբերել այն խաղլական մանկիկը, որը բերանը առնելով մի ընծայ ստացած զուգուկ կը փչէ անդադար և նրա ձայնից այնչափ կը զբաղվի, որ կը մոռանայ անդամ իր սովածութիւնը: Միտքս պարզելու համար կը վստահանամ հարցնել. քանի որ մեզ տիրապետում է մի ընդհանուր հայրենասիրական տաղնապ, ոգևորութիւն և յափշտակութիւն, քանի մարդիկ եղան արդեօք Հայաստան գնացողները այնտեղ գործելու համար: Ո՞ր դրամատերը իբր օրինակ դիմեց այնտեղ արդիւնաբերելու բնութեան չքեղ տուրքերը, որոնցով այնչափ առատ է մեր հայրենիքը. ո՞ր արհեստագէտը նպատակ ընտրեց գնալ Հայաստան իր շնորքը բաշխելու կարօտող մանուկներին, ինչ կենտրոններ կազմվեցան դրամական և բարոյական ձեռնհասութիւն մատուցանելու բազմաթիւ վհատեալներին. ո՞ր քարոզիչը Պետրոս Ամիենացի դառաւ և գնաց խրախուսելու հայերին որ չը վհատեն և չը գաղթեն իրանց երկրից, ենթարկելով նրան վերջնական վտանգին. ո՞ր լրագիրն է զբաղվում վերջապէս գաղթականութեան խնդրով, որը այսչափ թմրութեան և անգործունէութեան մէջ միակ խնդիրն է, որ ունի ամենամեծ կարևորութիւն հայրենեաց ներկայի և ապագայի համար: Մինչդեռ ինչ. ամեն կողմից փչում են դուզուկները, իսկ խեղճ Հայաստանը օրից օր, ժամից ժամ հալչում է ինչպէս ձիւնը արեգակից, եղը կրակից. նա հալչում է գաղթականութենից, որ չարունակվում է անմրուռունչ, գցելով ունևորներին Կ. Պոլիս և եւրոպական Թիւրքիայի ուրիշ քաղաքները, իսկ աղքատներին չորս կողմ, ամեն տեղ, ամեն երկիր, որ միայն դուրս է Հայաստանից և դուրս նրա երկնքից. Զը տեսնելով ոչ մի լրագրում առանձին հաղորդակցութիւններ այս մասին, հետևաբար որ և իցէ նպատակայարմար խորհուրդներ, ես պարտաւորութիւն եմ համարում, յարգոյ խմբագիր, յայտնել «Մշակի» միջոցով, որ ամենաչատն է զբաղվել միշտ հայոց տարեգրութեան խնդրով և մասամբ այժմ ես միակ զբաղվողն է նրանով, որ բոլոր մասնաւոր նամակներից, որ ես ստանում եմ իմ Էրզրումի բարեկամներից, երևում է որ գաղթականութեան գրգիռը մի նոր ոյժով պիտի ճայթի եկող գարնան, որին սպասում են անհամբեր գիւղացիք և քաղաքացիք, որոնք մտադիր են իսրայէլական չուն մղել այս անգամ ոչ դէպի Ռուսաստան, այլ եւրոպական Թիւրքիա, ուր կարծում է գտնել գլուխը կորցրած ժողովուրդը ամեն տեսակ անողորմութիւն և վայելումներ: Անձամբ ճանաչելով թէ ինչ ասել է գաղթականութեան զբրգիռ և ինչ անյաղթելի դժուարութիւն է նրան մարելը, երբ արդէն պայթեց, ես աղաչում եմ ազգի հեղինակաւոր պարագլուխներին անյապաղ մտածել այս չարիքը խափանելու համար: Խօսքս չէ ի հարկէ Էջմիածնի վրա, որը կացուցել է իր համար սրբազան նպատակ ամենին չը խառնվել հայրենեաց գործին, խօսքս է այնպէսների վրա, որոնք ունեն ժողովրդի մէջ պատիւ, երախտիք, համարում և ազդեցութիւն. խօսքս է Խրիմեանի և նրա նմանների վրա Այսպիսի ժողովրդական հոգի և լեզու ունեցող մարդիկ, թող հերիք պարապեն քարոզներով մայրաքաղաքի եկեղեցիներում, թող մի անգամ էլ խօսեն Հայաստանում, ուր չէ հասնում ոչ նրանց ձայնը և ոչ նրանց խօսքը, ուր տիրապետում է միայն խլութիւն, անգիտութիւն և վհատութիւն.

Էլ հերիք է, թող չտապեն այնտեղ....

Գրիգոր Նիկողոսեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թէլաւ, 19 յունվարի

Անցեալ տարվայ «Մշակի» № 226-ի մէջ կարդացի Էջմիածնից ուղարկած ընդարձակ յօդուածը

Ազատութենէն վեր ինչ բարիք կայ աշխարհիս երեսին: Նախիջևանի քլուբը տալիս է իր անդամներին իսկական ազատութիւն «օրէնքէ ճիշդ հիմանց վրա»:

Մեր քլուբը մօտեցուց շատ անմօտենալի մարդոց, իրար հետ ծանօթեցուց նոցա զաղափարները, հաշտեցուց շատ վրդոված սրտեր, իրար չվիճելով ողորկեց շատ անհարթութիւններ: Եթէ միմեանց հետ յաճախ հաղորդակցութիւն ունենալն, ամեն տեղ և ամեն ժամանակ, համարուել է մարդկային ազգը դաստիարակող և կրթող, ուրեմն Նախիջևանի քլուբը լիովին կատարել է իր կոչումը: Մեր քաղաքացին, ինչպէս որ ասացի, մտաւոր զարգացման կողմանէ, ոչինչ բանի այնքան երախտապարտ չէ որքան մեր քլուբին, ուր նա, ըստ կարելոյն, անցնում է իր ժամանակը ուրախ և օգտաւէտ կերպով:

Ո՛րքան քաղաքային հարցեր, որքան առևտրական խնդիրներ, որքան ազգային ձեռնարկներ, որքան առանձին կնճիռներ մեր քլուբի մէջ ստացել են բաւարար պատասխան, վճռուել են, որոշուել են և լուծուել են,—այդ գիտէ և կը խոստովանի ամեն բարեմիտ քաղաքացի:

Մեր քլուբը, ուրիշ տեղերի պէս, ասպարէզ չէ վտանգաւոր թղթախաղութեան, ոչ շռայլ գիներբուքներու և հացկերոյթներու և ոչ վաւաչոտ խրախուքներու, ոչ, ոչ. մեր թղթախաղը զբօսանք է և ոչ ընկերոջ գրպանէն փող որսալու հնար. թէև մեք գինի կը խմենք, բայց կը խմենք միայն մեր սիրեկան և որպիսի և իցէ երախտիք ցուցնող քաղաքացու կենաց, այդ ևս չափաւոր քանակով. մենք կուտենք այստեղ, բայց միայն ուժերս կազդուրելու նպատակով. մեր երաժիշտները կը նուագեն (կը չալեն) միայն երիտասարդներին և օրիորդներին անմեղ վայելչութիւն և ազնիւ մտաւորութիւն պատճառելու խորհրդով: Դարձեալ և դարձեալ կասեմ, մեր քլուբը իսկապէս յարմարեցուցած է մեր համեստ հայկական կեանքին:

Մեր քլուբի մէջ յղութիւն և կեանք կը ստանան շատ բարենորոգութիւնք: Եթէ մենք այս օրուայ օրս ծառուղի (бульваръ) ունենք և եթէ քաղաքիս մէջ տեղ տեղ քարայատակած է այդ քլուբի մէջ խօսուած և որոշմունք ստացած է. եթէ մենք, Աստուծով, մօտիկ ապագայումս կունենանք քաղաքիս ամենայարմար տեղումն սասարակաց պարտէզ, ես և բոլոր քաղաքի քարտուղարը և դէպի Ռօստով տանող ձի—երկաթուղի այդ ևս պիտի լինին մեր քլուբի մէջ խօսուածի և դէբատների հետևանքը: Մեր ապագայ միջնակարգ վարժարանի բացումը մըշակվում է քլուբի մէջ. օրէ օր նորա յետ ձգելու միակ պատճառը այն է, որ մենք մտածում ենք «ինչպէս անէինք, որ նա (վարժարանը) լիներ իսկապէս ազգային, հայկական և ընդ նմին հացատու վարժարան» և ոչ թէ մի քանի բաղդախնդիրների և ազգամոլաս ազգասէրների համար անկեալանոց, իսկ մեր խեղճ տղայոց համար արգելանոց. Պրաքտիկական հայը ապարդիւն լուսաւորութեան ցոլքէն շատ չի խաբվում. իսկ իւր ազգութեան մաքրութիւնը ամեն բարիքէն վեր դնում է: Ահա ձեզ համառօտ, բայց ճիշդ պատասխանը, թէ ինչու մեր միջնակարգ վարժարանի բացումը ուշանում է:

Մեր քաղաքացոց և մանաւանդ մեր երիտասարդաց մէջ ծագել է սէր դէպի ընթերցանութիւն. Միայն կոյրը չի տեսնի և անուղղելի կամակորը չի խոստովանի որ այդ ևս մեր քլուբի անհերքելի արդիւնքն է: Բաւականին հանգիստ և յարմար ընթերցասենեակ, բազմաթիւ և բազմատեսակ օրագիրներ և լրագիրներ, ազնիւ խօսակիցներ,—վիճել պէտք է, որ այսպիսի դիւրութիւնքը չուտ ծնեցնէին ամեն երիտասարդի զգայուն սրտի մէջ ընթերցանութեան սէրը: Ամեն օր կարդալ օգտաւէտ գրքեր, կարդացածի վրա խօսել, դատել, վիճել,—ահա քեզ ժողովրդական համալսարան:

Զը կարծեմ որ մեր քլուբի այցելուները երբ և իցէ մոռանան օրն բարեգործ ազդեցութիւնը, այն օգտաւէտ զրոյցներն, այն ունեցել են ընթերցասենեակումն:

Եթէ ժամանակէ ժամանակ «Փորձի», «Մեղու Հայաստանի» և «Մշակի» թերթերն եղան Նախիջևանցոց կեանքի արձագանք, այդ ևս մեր քլուբի ազդեցութեան հետևանքն էր:

Մեր քլուբի հաստատութիւնը, տեղութիւնը և ծաղկումը երախտապարտ են պ. Մինաս Խալիպեանին, որ, ճշմարիտ պէտք է ասել, մայրական գթով կեանք, մնուղ և զարգացումն տուեց այս օգտաւէտ հիմնարկութեան, և ինչ բարի հետևանք որ ունեցաւ դա մեր ժողովրդի վրա, բոլորը, բոլորը պիտի առդրել մեր ազնիւ քաղաքակցի եռանդին:

Անցեալ տարի քլուբի երախտագէտ անդամները ի յիշատակ 15 ամեայ տարեդարձին (քլուբի հաստատութեան) տուին պ. Մ. Խալիպեանին փառաբեղ և մեծածախ հացկերոյթ.... բայց, հազար ափսոս, որ այդ միջոցին ոչոքի մտքէն չանցաւ պ. Խալիպեանի բարի յիշատակը մի առաւել օգտաւէտ գործով անմահացնել, զորօրինակ քաղաքային մատենադարանի կամ մի նոր ծառուղիի շինութեամբ, որով, անշուշտ, մենք առաւել արժանապէս մեծարած կը լինէինք մեր սիրելի բազմարդիւն քաղաքակցին...

Այժմ մեր քլուբի անդամների մէջ մի փոքրիկ երկպառակութիւն է մտել. մի մասը կամենում է մնալ այժմուայ տան մէջ, իսկ միւսը տեղափոխուել պ. N-ի չքեղաշուք տունը: Մինաս Խալիպեանի հակամիտութիւնը դէպի երկրորդն է: Ինչ մեղքս պահեմ, ես ևս համաձայն եմ նորան: Եւ ինչպէս չը համաձայնվեմ. ախր երևակայեցէք ձեզ մի գեղեցիկ ճարտարապետութեամբ շինած տուն, մէջի սենեակները լայնարձակ, բարձրադիր, մաքրաւոյ, տախտակամածները փառքէ, թատերակոչութեան և երաժշտանոցի համար մի անագին դահլիճ, ամեն կերպ յարմարութիւն, ճոխութիւն, իշխանական զարդ ու վայելչութիւն: Մարդ կոյր պիտի լինի, որ չի հաւանի, չը համոզուի, չը յօժարի...

Մեծապատիւ անդամներ և ազնիւ բարեկամներ, ի սէրը Աստուծոյ կը խնդրեմ ձեզ. մի լինիք կամակոր և եսամոլ. միտ արէք որ ոչ ամեն ձեր հաւանածը լաւ է և ոչ ամեն ուրիշի հաւանածը վատ է...վերջապէս հասկանանք, որ մեր անձնական կամակորութեամբ հասարակաց գործին արգելք լինելը ամօթ է: Որիս ինչ ինաս, եթէ ամեն մինիս քանի մի մանէթովը մեր պատուական քաղաքացիներէն մինի կիսաչէն տունը չենք ու գեղեցկութիւն պիտի ստանայ...որիս ինչ ինաս, եթէ մի պատուաւոր և անվնաս քաղաքացի ապահոված լինի մի պատառ կակուղ հացով...Մենք խո Խօպանի չէթերէն եկած գազանասիրտ բազդախնդիր չենք...

Սիւլիկ

իմ մասին։ Որովհետև ինձ համար անհերքելի է որ նոյն անստորագիր յօդուածի հեղինակն է Խորէն վարդապետ Ստեփանէն,*) ըստ որում այն բոլորը, ինչ որ գրած է նրա մէջ, նա ինքն կըրկնել է իմ երեսիս շատ անգամ և շատ վկաների ներկայութեամբ, ուստի պարտք եմ համարում ինձ համար իմ հրապարակական չնորհակալութիւնս յայտնել նրան իր դէպի ինձ ունեցած ազնիւ զգացմունքների համար իբրև օծակից և պաշտօնակից իմ։

Վահան վարդ. Բաստամեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Ս. Պետերբուրգ 4 յունվարի

Ձեր պատուական «Մշակի վերջին համարների էջերում անընդհատ երևում են մի շարք ազգասիրական ջերմ ոգով գրած յօդուածներ, որոնց հեղինակն է պ. Գրիգոր Նիկողոսեանը։ Սոյն յօդուածներից մենք տեղեկանում ենք, որ թշուառ Հայաստանին մօտ ապագայում սպասում են նոր արհաւիրք, նոր առիթ սոսկալի գայթակղութեան։ Ներկայ XIX դարում հայոց, այսինքն աշխարհիս հնագոյն քրիստոնէից դէմ խաչակրաց պատերազմ է հրատարակված։ Ո՞յք են խաչակիրները, կը հարցնէք դուք։ Եւրոպացի անխղճմտանք ուսումնական հոգևորականները, որոնք միսիոներների դիմակը հագած յանդգնել են միջամուխ լինել Հայաստան երկրառակութիւն, ատելութիւն և անմիաբանութիւն սերմանելու դիտաւորութեամբ նրա վշտացեալ զաւակաց սրտերում։ Այսպիսի մի դառն ճգնաժամում խեղճ հայ հասարակութիւնը ոչի օգնութեան դիմէ. իր հոգևոր բարձր կառավարութեան. բայց այդ շատ ծիծաղելի կը լինէր, որովհետև վերջինս վաղուց արդէն կենդանութեան նշոյլ անգամ չէ ցոյց տալիս։ Ի՞նչ անի. սպասի որ էջմիածնի ձեմարանը նրա հոգևոր քարոզիչներ պատրաստի եւրոպացւոց հետ մաքառելու. սա ևս մեր հասարակութեան կողմանէ կատարեալ խելագարութիւն կը լինէր. թշնամին դուռն է հասել. նրա ճանապարհը խափանելու համար պէտք են առաձեռն միջոցներ։ Ո՞ւր են մեր մէջ այդ միջոցները, որոնք կարողանային մատուցանել հայ ազգիս այս ծառայութիւնը. պատասխանում ենք մեր պարբերական թերթերն են և նրանց ժրաջան խմբագիրները։ Բնութիւնից տկարին մէկ իրաւունք է դրված, այն է գանգատել. ուրեմն, գանգատենք մինչև մեր վերջին շունչը. բողոքենք Եւրոպային նոյն իսկ Եւրոպայի անարժան որդոց դէմ։ Մինչև ցայժմ հայերիս հալածողները քրդեր և բաշիբուզուկներն էին, այսուհետև հանդէս են դուրս գալիս բուն քաղաքակրթեալ եւրոպացիք իրանց նուրբ, մահաբեր և աւելի սպանիչ գործիքներով։ Հայ ազգը, ասում են, ի բնէ տիրասէր, համբերող ու երկայնամիտ է քանի որ յափշտակում են նրա գոյքը և ստացուածքը միայն, բայց երբ դիպչում են նրա խղճմտանքին և հաւատին, նրա երկայնամտութիւնը իբր թէ հատում է. qui vivra, verra։ Ապագան ցոյց կը տայ, մեր V-դ դարու նախնեաց առաքինութեան յիշատակն կենդանի է արդեօք XIX դարու հայերիս մտքում, թէ իսպառ ջընջվել է։

Մենք մի քանի ուսանողներս խնարհաբար կը խնդրենք մեր խմբագիրներին հայթայթելանդադար այս ծանրակշիռ հարցը, որ մի և նոյն ժամանակ է մահու և կենաց հարցը. իսկ մեծ պ. Գ. Նիկողոսեանին յայտնելով հրապարակորէն մեր ջերմ ու անկեղծ համակրութիւնը կասենք. ազգը երբէք չի մոռանայ իր ճշմարիտ և քաջ մշակներին և ոսկի տառերով կը գրօշմէ նրանց անունները իր պատմութեան մէջ։

(12 ստորագրութիւն)

*) Չենք հասկանում ինչ աղբիւրից է քաղել հայր Բաստամեանը այդ տեղեկութիւնը։ Կարող ենք նրան հաւատացնել, որ սաստիկ սխալվում է։ Խմբ.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԺԻՒԼ ԳՐԷՎԻ

Նորերումս հեռագիրը հաղորդեց մեզ որ Ժիւլ Գրէվի ընտրված է Ֆրանսիական հանրապետութեան նախագահ։ Մենք աւելորդ չենք համարում ծանօթացնել մեր ընթերցողներին Գրէվիի կարճ կենսագրութեան հետ։

Ֆրանսուա-Պոլ. Ժիւլ Գրէվի ծնվել է 1813 թվի, օգոստոսի 15-ին։ Պոլենսիի ուսումնարանում ուսումը աւարտելուց յետոյ նա մտաւ Փարիզի համալսարանը, որտեղ իրաւաբանութիւն էր ուսանում։ Նա մասնակցեց 1830 թվի յուլիսի յեղափոխութեան օրերին և պատերազմում էր տերութեան դէմ այն ժամանակ փողոցների վրա պատահած ճակատամարտերում։ Նա կռուողների մէջն էր, երբ ամբոխը վեր առաւ Բաբիլոն անուանված զօրանոցը։ Արդէն 1839 թվին նա յայտնի ադվոկատ էր։ 1848 թվին նա տերութենից նշանակվեց կառավարութեան կոմիսար Ժիւրա գաւառում, որտեղ նա իր պաշտօնը խղճմտաբար և տաղանդաւոր կերպով վարելով, բոլոր կուսակցութիւնների համակրութիւնը գրաւեց։ Նուտով ժողովուրդը նրան ընտրեց սահմանադրական-ազգային ժողովի պատգամաւոր, որպէս Ժիւրա գաւառի ներկայացուցիչ։

Ազգային ժողովում նա յայտնվեց որպէս գործնական ճառախօս և շուտով ընտրվեցաւ փոխ-նախագահ ժողովի։ Նա թէև սոցիալիստներից իրան հեռու էր պահում, բայց միշտ քուէարկում էր ձախակողմեանների հետ միասին։

Լուի-Նապոլէօնի նախագահութեան ժամանակ Գրէվի միշտ թշնամի էր հանդիսանում կառավարութեան քաղաքականութեան, իսկ երբ Բօնապարտը կատարեց իր պետական հարուածը, Գրէվի հեռացաւ հասարակական ասպարէզից և սկսեց պարապել միայն ադվոկատութեամբ։

Երբ կրկին ընտրվեցաւ օրէնսդիր ժողովի անդամ, նա հաւատարիմ մնաց ռամկապետական սկզբունքներին, և թշնամի Նապոլէօն III-ի քաղաքականութեան։ Նա առաջիններից մին էր, որ բողոքեց Ֆրանսիական զօրքը Հռոմ ուղարկելու դէմ պապին պաշտպանելու համար։

Որպէս ադվոկատ նա այնքան նշանակութիւն ստացաւ որ 1868 թվին նա ընտրվեցաւ ադվոկատների գլուխը (bâtonnier)։

Օրէնսդիր ժողովի մէջ ամեն ընտրութիւններին իր երկրի պատգամաւոր ընտրվելով նա ձայների այնքան բազմութիւն էր ստանում իր ընտրողներից, որ կառավարութիւնը ոչ մի անգամ չը կարողացաւ Ժիւրայի մէջ ընդդիմադրել նրա ընտրութեանը մի պաշտօնական կանդիդատով։

Երբ Նապոլէօն III-ը ընկաւ և Ֆրանսիայի ներքին խռովութիւններից և ժամանակաւոր ազգային կառավարութենից յետոյ հաստատվեցաւ չափաւոր հանրապետութիւնը Թիէրի նախագահութեամբ, Ժիւլ Գրէվի ընտրվեցաւ Ֆրանսիական ազգային-ժողովի նախագահ։

Գրէվի ծնված էնախագահելու համար։ Ազնիւ, անկողմնապահ ոգի, սառը բնաւորութիւն, ընդարձակ խելք և խոր հմտութիւններ,—ահա մարդը, որին ընտրել է Ֆրանսիան իր նախագահ։

Գուցէ Գրէվի ինիցիատիվ տուող մարդ չէ, նա գուցէ անընդունակ կը լինի նոր, աչքի ընկնող վերանորոգութիւններ անել իր նախագահութեան եօթ տարվայ ընթացքում,—բայց նա կը լինի մի անկողմնապահ, իր խօսքը, իր երդումը պահող, հանրապետութեան գործին հաւատարմութեամբ ծառայող, բոլոր ինտրիգաներից և կուսակցական կրքերից իրան բարձր պահող՝ երկրի օրինական ցանկութիւնների հարազատ ներկայացուցիչ։

Գրէվի այն մարդն է որ հարկաւոր էր Ֆրանսիային այս րոպէիս, որպէս զի նորահաս հանրապետութիւնը կարողանար անվրդով, հանգիստ և տևողական կերպով հաստատ և խոր արմատներ գցել Ֆրանսիայի հողի մէջ։

Գրէվի,— այդ մարմնացած սառնութիւնը, անկողմնապահութիւնը և ազնութիւնը,—կը լինի հանրապետութեան ամենահաւատարիմ պահապան։

Գ. Ա.

ՖՐԱՆՍԻԱ

Դեռ քանի չէին եղել սենատորական ընտրութիւնները, հակահանրապետական լրագիրները իրանց համար ամենասարսափելի զէնք էին շինել մի քանի դատարկախօս և աւանդապահ լրագիրների այն խօսքերը, որ իբր մի եւրոպական ժողով է կազմվել այն նպատակով, որ ոչնչացնէ Ֆրանսիայի հանրապետութիւնը, դրանք այդ լուրերը այնպիսի եռանդով և այնպիսի արագութեամբ սկսեցին տարածել որ, յիրաւի, դա քիչ չը վնասեց գործին. դրանք հաւատացնում էին, որ իբր Վիլհելմ կայսրը եւրոպական մի ընդհանուր ժողով է հրաւիրել Ֆրանսիայից արմատախիլ անելու այն ցաւը որ սպառնում է բոլոր Եւրոպայի միապետական պետութիւններին։

Բայց այժմ որ Ֆրանսիայում հաստատ հիմք ձգեց հանրապետութիւնը, թող աջակողմեան և աւանդապահ լրագիրները փոքր ինչ կարմրեն այն համակրական ընդունելութեան համար, որ եւրոպական մամուլը արաւ նոր հանրապետութեանը. այդ սիրոյ ընդունելութիւնը զարմանալի չէ թվում Անգլիայի, Բելգիայի, Իտալիայի և Զվեյցերիայի կողմից, որոնք պարլամենտական երկիրներ են, բայց և Պրուսիայի, Աւստրիայի և Ռուսաստանի լրագիրներն անգամ, մի յայտնի համակրութեամբ են խօսում Ֆրանսիական հանրապետութեան վերաբերութեամբ։

Ուրեմն էլ ո՞րտեղ են մնում Եւրոպայի դաղտնի ժողովները հանրապետութիւնը կործանելու, երբ նոյն իսկ այն երկիրներն էլ են յայտնում իրանց համակրութիւնը, որոնց կառավարութեան ձևը, իրաւի, բաւական մեծ տարբերութիւն ունի հանրապետական կառավարութեան ձևից, և մանաւանդ աւելի նշանաւոր է այդ երկիրների լրագիրների կարծիքը նրանով, որ այդ լրագիրները առհասարակ միշտ մի տեսակ յարգանքով են վերաբերվում դէպի իրանց հայրենիքի քաղաքական կարծիքը, ուրեմն և այդ լրագիրները, եթէ կարելի է այսպէս ասել, մի տեսակ կիսապաշտօնական ձև ունեն։

Եւ այսպէս Ֆրանսիայի հանրապետութեան աջողութիւնը ոչ մի տեղ վատ տպաւորութիւն չը գործեց, ոչ ոք չը բողոքեց, ընդհակառակը, ամենքը կարծում են, որ Ֆրանսիայում հանրապետութեան հաստատվելը նշան է ներքին խաղաղութեան և թէ դրանով Ֆրանսիան աւելի հաստատ կը պահէ օտար պետութիւնների հետ միջազգային յարաբերութիւնները։

Բոլոր ասածներիս կենդանի ապացոյց կարող են համարվել Բերլինի «Nordd. All. Ztg.» «Prov. Corresp.» լրագիրները, Վիէննայի «Fremdenblatt» և «Presse» լրագիրները և Ս. Պետերբուրգի «Голосъ» լրագրի ջերմ համակրութիւնները, որոնք առանց տարակուսելու գովեցին և սիրով ողջունեցին Ֆրանսիական նոր հանրապետութեանը։ Մենք չենք խօսում և այն բազմաթիւ երկրորդական և մինչև անգամ ասիական լրագիրների մասին, որոնք այնքան ուշադրութեամբ հետևում են Ֆրանսիայի ներքին շարժմանը։

Պատմելով այս բոլորը, մենք երբէք չենք կամենում ցոյց տալ օտար պետութիւնների ազդեցութիւնը այդ երկրի վրա, ընդհակառակը մենք սրտով ցանկանում ենք, որ Ֆրանսիան, ինչպէս մինչև այժմ ապրել է իր ներքին անկախ պրինցիպներով, նոյնպէս շարունակէ ապրել և այսուհետև իր սեփական համոզմունքներով։ Ֆրանսիան դուրը թշնամիներ չունէ. մեր կարծիքով նրա ամենամեծ թշնամիները նրանք են, որոնք այսպիսի մեքենայագործութիւններով աշխատում են երկպառակութիւններ ձգել երկրի մէջ, և փոխանակ ներդաշնակ ու խաղաղ կառավարութեան, թշնամութեան սերմեր են ցանում անմեղ ու միամիտ սրտերում։ Յունվարի 5-ի ընտրողները իրանք իրանց սխալված չեն համարում, և ոչ իրանց դէպի օտար պետութիւնները ունեցած յարաբերութեան մէջ, որովհետև միապետական Եւրոպան պարզ կերպով ցոյց տուեց իր մեծ համակրութիւնը դէպի ընտրողների հանրապետական քուէները, և իրան ծափահարութեամբ կատարելապէս վարձատրեց նրանց։

ԹԻՒՐՔԻԱ

Կ. Պոլսից «Polit. Corresp.» լրագրին գրում են հետևեալը։

«Յունվարի 14-ին Ֆինանսների մինիստր Զուխդի-փաշայի տանը մի անցք պատահեց, որ շատ լաւ նկարագրում է Թիւրքիայի այժմեան քաղաքական և Ֆինանսական դրութիւնը։ Ֆինանսների մինիստրը հրաւիրեց իր մօտ բանկի դիրեկտորին և ընդունեց նրան հետևեալ հարցով. «կարող էք մեզ տալ 16,000 օսմանեան լիրա։ «Ձեր դերադանցութիւն, պատասխանում է բանկի դիրեկտորը, այդքան փող տալը մեզ համար շատ դժուար կը լինի։ Մինչև այժմ ձեզ անդադար տուած գումարները դատարկեցին մեր դրամարկղը և մի և նոյն ժամանակ դուք գիտէք, որ մեզ ապահովութիւն է հարկաւոր։ Պէտք է նկատել, որ կառավարութիւնը առանց յիշեալ գումարի ստանալն էլ բանկին արդէն 150 միլիոն Օսմանեան լիրա պարտ է։ Ֆինանսների մինիստրը ցոյց տուեց բանկի դիրեկտորին գինուորական մինիստր Օսմանփաշայի հետևեալ բովանդակութեան նամակը։ «Եթէ դուք ինձ երկու օրվայ ընթացքում չէք ուղարկի փող, հաց և զանազան պաշարներ գնելու համար, այն ժամանակ ես պատասխանատու չեմ կարող լինել զօրքերի համար։ Մենք ամենավատ դրութեան մէջ ենք։ Գործերը այսպէս ընթանալ չեն կարող։ Բանկի դիրեկտորը վերցրեց այդ նամակը, իր ընկերոջ հետ խորհրդակցելուց յետոյ յանձնեց յիշեալ գումարը ուր հարկն էր։ Անկասկածելի է, որ զինուորների կրած զրկանքները նրանց մէջ անբաւականութիւն է յարուցանում, այնպէս որ զօրքերի մէջ ապստամբական նշոյլներ են երևում։ Պանկալդի զինուորական ուսումնարանում կատարեալ ապըստամբական ոգի է տիրապետում։ Այդ ուսումնարանի մէջ կալանաւորել են բազմաթիւ նամակներ և ոտանաւորներ, որոնք ուղղված են սուլթանի դէմ։ Առանձին անբաւականութեան առիթ եղաւ այդ ուսումնարանի մէջ Սուլէյման-փաշայի դատապարտելը, որ այդտեղ մեծ հեղինակութիւն էր համարվում։ Ասում են, որ այդ հանգամանքը պատճառ եղաւ սուլթանի տուած հրամանին վերաքննել Սուլէյման-փաշայի գործը։ Այդ փաշան սոֆիաների և զինուորական ուսումնարանների երիտասարդ աշակերտների մօտ հեղինակութիւն է համարվում այն պատճառով, որ հրամայեց կոտորել մի քանի հազար բոլգարներին։»

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԱՁԱՅՆԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 յունվարի։ Այստեղի երդուեալ դատաւորները վճռեցին գանձապահ Իւբանցեվին երկու միլիոն բուրլ վատնելու համար զրկել բոլոր առանձին իրաւունքներից և արտօնութիւններից և աքսորել Ենիսէյեան նահանգը բնակվելու համար։ Քաղաքական գործին վճռած է բաւականութիւն տալ։ Յունվարի 24-ին Մեծ Դուքս Մեկլենբուրգ Շվերինեան իր Ամուսնի հետ ուղևորվեցան արտասահման։

ՎԵՐՍԱՅԼ, 25 յունվարի (6 փետրվարի)։ Սենատի և ազգային ժողովի մէջ կարդացվեցաւ Գրէվիի պատգամագիրը, որ կազմված է չափաւոր և խաղաղական ոգով։ Նախագահը խոստանում է շարունակել ապատամիտ, բայց վճռողականապէս պահպանողական քաղաքականութիւն և այդպիսով գործակցել ընդհանուր խաղաղութեան հաստատվելուն։ Ժողովի նիստը Գրէվիի պատգամագիրը ծափահարութեամբ ընդունեց. աջ կողմը լռութիւն էր պահում։ Ազգային ժողովի նոյն նիստի ժամանակ ժողովի նախագահ Գամբետտա կարճառօտ ճառ ասաց, որով շնորհակալութիւն յայտնեց իր ընտրութեան համար և ասաց. «Ֆրանսիան հանրապետութիւն էր ցանկանում, պատգամաւորներն էլ նոյնն էին կամենում։ Թէ խաղաղութիւնը և թէ հասարակական հաւատարմութեան և արդարութեան վրա հիմնված ազատութիւնը ապահովված կը լինեն։» Ազգային ժողովը իր նիստերը յետաձգեց մինչև երեքշաբթի։ Երեքշաբթի կընարվի բիւդժետի մասնաժողովը։

ԲԵՐԼԻՆ, 25 յունվարի (6 փետրվարի)։ Երէկ հասաւ այստեղ իշխան Բիսմարկ։

ՓԱՐԻԶ, 25 յունվարի (6 փետրվարի)։ Փոստային և հեռագրական մինիստրութիւն է հաստատված։ Մինիստր նշանակված է Կոտրի։

Խմբագիր—Հրատար. ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԴՈՒԵԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ Բերնար Իլիչ Միրզոիչ, որ բնակվում է Արսենալնայա Դաւի դօվսկայա փողոցների անկիւնում Միրզոեվի տանը, ԸՆԴՈՒՆՈՒՄ Է գործերի համար և առաւօտեան 8-10 ժ. և երեկոյեան 5-7։

4—4

ԳՐԻԳՈՐ ՆԱՍԻՐԵԱՆԻ ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ ստացվել են մեծ քանակութեամբ ՖՐԱԿԻ ԵՒ ՏՐԻԿՕԻ ՍԻՒՐՏԻՒԿՆԵՐԻ ՇՈՐԵՐ, որսորդական ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺՕԿԵՏՆԵՐ, ձմեռային ՊԱԼՏՕՆՆԵՐ և ՎԱՐՏԻԿՆԵՐ, երեխայոց հագուստներ, ՎԵՐԱՐԿՈՒ—ԽԱԼԱՏՆԵՐ զարդերով, նոյնպէս ընդունվում են ՊԱՏՈՒԷՐՆԵՐ զինուորական և քաղաքական հագուստների համար։ Ցոյս ունենմ, որ ինչպէս պատուիրողները նոյնպէս և դնողները ԲԱՒԱԿԱՆ ԿԸ ՄՆԱՆ։

31—75

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է Կոմսար տէր-Դաւթեանցի Русское слово—նոր դասագիրք ռուսերէն լեզուի, հայ դպրոցների համար, երկրորդ տպագրութիւն, նորանոր յօդուածներով և փոփոխութիւններով լրացրած։ Այս գիրքը հաճաթեամբ պ. Թեմական վերատեսչի ընդունված է Գրաստանի և Իմերեթի վիճակի հայոց բոլոր միջնակարգ և ծխական ուսումնարաններում։ Սա ընդունված է նոյնպէս Կովկասի և միւս թեմերի ուսումնարաններից շատերում։ Վաճառվում է Թիֆլիսում բոլոր դրավաճառանոցներում։ կարող են ստանալ և աշխատասիրողից եղբարց Աբովեանցների մագազինում, Միխայլովսկու կամուրջի վրա, գինն է 40 կոպէկ։ Ճանապարհի ծախսը առնողների վրա է։ Գումարով առնողներին մեծ զեղջումն կը լինի եթէ դիմեն ուղղակի աշխատասիրողին հետևեալ հասցէով։

Тифлисъ. Кэмсару Теръ-Давидіанцъ.

Въ магазинѣ бр. Абовянцъ, на Михайловскомъ мосту.

РАСПРОДАЖА БЕЗЪ ЗАПРОСА.

По случаю прекращенія розничной торговли и открытія оптоваго склада, назначается **распродажа** по самымъ дешевымъ цѣнамъ, на 25% дешевле обыкновенныхъ цѣнъ, товаровъ: крепъ, ардаганъ, матласе, репсъ, фай. карсъ, къруасъ, кашемиръ черный отъ 75 к. до 2 р. 30 к. альпага черный отъ 35 к. до 75 к. шали суконныя отъ 3 р. 25 к. до 7 р. 35 к., ковры бархатные, тикъ холщевый, рубашки полотняныя, и т. п. Въ каравансараѣ Тамамшева, верхній этажъ, противъ гостиницы Кавказъ, №№ 10 и 11 магазиннъ **Малакова.**

3—4

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍ որ գանվում էր Գօլովինսկի պրոսպէկտի վրա Սարաջևի տանը, այժմ գանվում է նոյն ԳՕԼՕՎԻՆՍԿԻ պրոսպէկտի վրա, ՇԻՕԵՎԻ տանը, Գերմանական կլուբի և Վէստլեի ֆոտոգրաֆիայի մօտ մի և նոյն սանդուղքով։ Այցելողների համար բաց է ԱՄԵՆ ՕՐ առաւօտեան 9 ժամից մինչև երեկոյեան 5 ժամը։ Հաւաքածուին ՆՈՐ ՆԿԱՐՆԵՐ են աւելացրած։

23—25

ԹԻՖԼԻՍ հիւրաս ոցում Դրվօրցովայա փողոցի վրա, Սարաջևի տան պատրաստվում են բլենները յունվարի 17-ից առաւօտեան 1 ժամից մինչև երեկոյեան 4 ժամը։ Մուտքը բացից է։

1—4

ДѢВИЦА ищетъ мѣсто КОМПАНІОНКИ или ГУВЕРНАНТКИ. Адресъ: Старокатолическая улица, домъ Чиковаия № 10

ՄԷԿ ՕՐԻՈՐԴ ցանկանում է ընկերակցուհի կամ ՏՆԱՑԻՆ ՎԱՐԺՈՒՀՈՒ պաշտօն ունենալ։ Հասցէն, Սուրբ-Կարապետչիչեսկայա փողոց, տուն Զիկովանի, № 10

КОНТОРА ГАЛЛЕРЕИ АРЦРУНИ

ОТКРЫТА КАЖДЫЙ ДЕНЬ КРОМѢ ВОСКРЕСНЫХЪ ДНЕЙ отъ 9 часовъ утра до 2 часовъ пополудни

ԱՐՔՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՅԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

ԲԱՑ Է ԱՄԵՆ ՕՐ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ բացի ԿԻՐԱԿԻ օրերից։

МАГАЗИНЫ ОТДАЮТСЯ ВЪ НАЕМЪ ПО ОЧЕНЬ ДЕШЕВЫМЪ ЦѢНАМЪ

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ.

ԱՐՔՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՒՈՒՄ

ՀԱՏ ԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ, ՎԱՐՁՈՎ ԵՆ ՏՐՎՈՒՄ ԽԱՆՈՒԹՆԵՐԸ

ՔԱՐԱՓՈՒԽ „ԹՈՒՍԱՍՏԱՆ“ ՀԱԽՏԻ

(ՀԱՆՔԻՑ), ՈՐ ԳՏՆՎՈՒՄ Է ԶԷԼՕՒԱՆԻ ԱՐՈՒՐՁԱՆԻ ԿՈՒՐՍԷՒԱ ԳԻՒՂԻՄ

ԸՆԿ. ՆԻՇՄԱՆ—ՀԷՆԻՆԳ

Ծախվում է ՇԷՕՆԻՆԳԻ ՊՎԻԼԻՕՆՈՒՄ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՍԻՆ ԱՄԲՈՂՋ ՎԱԳՕՆՆԵՐՈՎ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՑԱՐԱՆԻՑ ՊՈՒԴԸ 25 ԿՕՊ., ԻՍԿ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ ՔԱՂԱՔԻ ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՕՊԷԿՈՎ։

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ ԵՒ ՏԱՐԲԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Աշակերտների և աշակերտուհիների ընդունելութիւնը սկսաւ յունվարի 8-ին 1879 թուականի։

Մանկական պարտէզը ընդունվում են մանուկներ, երկու սեռի էլ, 4-ից մինչև 7 տարեկան հասակը, իսկ տարրական դպրոցը 7-ից—12 տարեկանները։

Ուսման ընթացքը յարմարեցրած է միւս դպրոցների ընթացքին, այնպէս որ դպրոցում աւարտողները կարող են մտնել տղայք՝ տղայոց և աղջիկներ՝ օրիորդաց դպրոցի առաջին դասատունքը։

Պարտէզն ու դպրոցը գանվում են Վեղեամինսկի փողոցում Իշխան Ն. Ամատունու տանը. №—11։

ՅՈՒՆՎԱՐԻ 27 — ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒ — ԹԻՖԼԻՍ. 1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Յունվարի 26-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօլուիմպերիալը)	8	53
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1630	—
Հին 20 կ. 72 պր. 1000 „	1320	—
Վիգրիչնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 „	233	—
Երկրորդ 5% վիգրիչնի „	229	—
Մարսելի կուրսը 245—	100	—
Լօնդօնի կուրսը Օդեսայի վրա.	10	30
Վենայի կուրսը ածէ 121 գլ.	100	—
Դաւրեժի բարաթը. . .	5	80
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	315	—
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	102	—
Շաքարը բրօցկու . .	7	40
„ միւս տեսակը.	7	30
„ չաքարաւազը .	6	—
„ տրանզիտը. .	6	80
„ մաքսը վճարած	12	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	7	40
Միւս տեսակը հին սերմից.	6	70
Բուրդը թուչի . . .	8	—
„ թարաքամի .	4	10
Ալիւր Նորագալու . .	1	80
Երևանի. . . .	—	—
„ Գարին.	1	30
Մոմը բնաճարպի (стеар.)	12	60
Մետաքս Նուխվայ. .	190	—
Կախեթունը. . . .	140	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	40	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	55	—
Կոֆէն մսկօի. . . .	27	—
„ լիվանի . . .	23	—
„ մարտինկօյինը	18	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա .	3	
Անգլիա. .	4	
Գերմանիա. .	2	88
Ֆրանսիա . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Մանկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30—50 բուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 բուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 բուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Անանով։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլովո (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլովո.	1. 29	11. 57
Ռիոն . . .	6. 47	
Փօթի . . .	9. 40	
	առաւօտ.	
Փօթիից . .	9. 13	
Ռիոն . . .	12. 13	
Միխայլովո. .	5. 39	1 37
Գօրի. . . .	7. 5	4. 8
Թիֆլիս. . .	9. 31	7. 56

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . ,	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3, 92	2, 18
Ռիոն. . .	9.	6. 75	3. 75
Փօթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվումէ Թիֆլիսում ամեն օր։ Բագուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից չորեքշաբթի և կիրակի։ Բելիկլիչի տրակտից երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ

	Կոպ.
Բաց նամակ արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . .	8
Հնդկաստան . , .	70
Եգիպտոս	27

ԲԱՑԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը ժամը 9-ից մինչև 1 ժամը կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. Լիսիցեվ և Գօրալևվիչ ներքին հիւանդութիւններ, Բակատ վիներական և կաշու հ., Քուչարեանց վիրաբուժական և կանանց հիւանդութիւններ։

Երեքշաբթի. Վէրմիչէվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակատ կուրծքի և ներվային հ., Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան. Բէյլիս աչքի հ.։

Չորեքշաբթի. Լիսիցեվ ներքին հ., Բակատ վիներական և կաշու հ.։

Հինգշաբթի. Վէրմիչէվ ներքին հ., Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների։

Ուրբաթ. Լիսիցեվ ներքին հ. Բակատ կրծքային և ջղային հ., Ա. Բախուտով կանանց և երեխաների հ. և մանկաբարձութեան։

Շաբաթ. Վէրմիչէվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակատ վիներական և կաշու հ., Բէյլիս աչքի հիւանդութիւններ։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ՄՕՍԿՎԱ. Ալ. Թաթ. Նամակը հիմա չարժէ տպել։ «Моск. Вѣд.» դեռ չէ ստորագրվել։ «Մըշակ» ձեզ ուղարկում ենք։

—Վ.-ԱԳՈՒԼԻՍ. «Ամբաղդ Նինոս» վերնագրով յօդուածը նոյնպէս և յիշողութիւնները չեն տպվի։

—ԴԵՐԲԵՆԴ. Դերբենդցի. Շարունակեցէք գրել։ Ձեր նամակները վատ չեն։ Հաղորդեցէք մեզ ձեր հասցէն։ Օրերումս ձեզ մի նամակ կուղարկենք։

—ՀԱՄԶԱՉԻՄԱՆ. Ա. Կարծում ենք ձեզ առիթ չենք տուել մինչև այդ։ Աստիճան մտերմական նամակ գրելու։ Վատ չէր լինի, եթէ ծանօթանայիք քաղաքավարութեան կանոնների հետ։

—ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ. Ց. Ս. Նամակը հնացել է։ Գրեցէք, հետևեալը երևի կը տպենք։

Дозволено Цензурою 26 Января 1879 г. Тифл

Տպարան Ց. Մարտիրոսեանցի

Типографія Мартиросіанца